

18406

891.99

S-41

Ph & ch

1910

165

5-48-93
5-41

ԱՐՁԱՄ ՏԵՐ-ԽԱՂԱՏՐԵԱՆ



ՀՈՒՐԻ-ՄԱԼԱԲ

200 ՀԵԲԻԱԹ

Արտատ. Ապրիլ ամսագրից



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆ

№ 2

Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերություն

2

391.99
5-41

Թ Ի Յ Լ Ի Ս
Տպարան „Կոմիտաս“ Բնկ. Վեյկաժնավակ. 18.
1910

ԱՐՁԱՄ ՏԷՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆ

891.99

S-41

✓

ՀՈՒՐԻ-ՄԱԼԱՔ

Արտատ. «Ադրի» ամսագրից

1002
6846



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

№ 2

Նրբանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերություն

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Լույս» ԸՆԿ. ՎԷԼԵԱՄԻՆՈՎՍԿ. 18.

1910

ՀՈՒՐԻ ՄԱԼԱՔ

Մի թագաւոր կար, ունէր մի որդի.
 Որդին հասել էր, ուզեց պսակի:
 Թէ գիւղ, թէ քաղաք, թէ փոքր թէ մեծ,
 Ամենայն կողմեր լուրը տարածեց:
 Մեծ մեծ իշխաններ՝ պալատին մօտիկ,
 Ով ունէր հասած աղջիկ գեղեցիկ,
 Էլ գիշեր, ցերեկ հանգիստ չունէին. —
 Խնամու փառքին հասնել կուգէին:
 Սակայն փեսացուն, թէն գեռահաս,
 Մի խելօք խնդիր դրեց հօր առաջ:
 Իրաւունք առաւ շորերը փոխել,
 Իր տէրութեան մէջ գնալ, պտտել,
 Իր ժողովրդին իր աչքով տեսնել,
 Իր ժողովրդից հարմանցու ընտրել:
 Հայրը հաւանեց որդու խնդրքը:
 Որդին մի գիշեր փոխեց զիրքը.
 Փոխեց արքայի թագ ու ծիրանի,
 Թողեց կեանքը պալատականի,
 Մի հաւատարիմ ընկեր վեր առաւ,
 Ամրոցից ելաւ աշխարհներ ընկաւ:
 Շատ ջրջեց թէքիչ, Աստուած է գիտում,
 Հին հէքեաթները այսպէս են պատմում.
 Ուր որ գնում էր, որտեղ որ մնում՝
 Թէ գիւղ, թէ քաղաք, թէ դաշտ, սարում,
 Նա ամեն տեղ էլ նոյն բանն էր լսում. —
 «Արքայի որդին հարս է որոնում»:

Այսպէս սպասող և սրտատրոփ
 երեք որբ քոյրեր անտէր, անսփոփ,
 Մի ուշ երեկոյ նստած տան շէմքին,
 Մի-մի թել մանող իլիկ ձեռներին,
 Անց ու դարձ անողներին էին նայում,
 Եւ իրարու յետ այսպէս զրուցում.

Մեծ քոյրն ասում էր.

«Ախ, թէ ինձ ժպտար կոյր-բաղդն աշխարհի,
 «Եւ ինձ հաւանէր որդին արքայի,
 «Ես նրա համար մենակ կը գործէի,
 «Մի հսկայ վրան, այնքան լայն-յարձակ,
 «Որ ծածկէր նրա զօրքին բովանդակ»:

Միջնեկն ասում էր.

«Ախ, թէ ինձ ժպտար կոյր բաղդն աշխարհի,
 «Եւ ինձ հաւանէր որդին արքայի,
 «Ես բաց կանէի այնքան ճոխ սեղան,
 «Որ լիացնէր զօրքին ամենայն»:

Իսկ փոքրը հասկանալով.—

«Ախ, թէ ինձ ժպտար կոյր-բաղդն աշխարհի,
 «Եւ ինձ հաւանէր որդին-արքայի,
 «Ես կը ծնէի արքային վայել,
 «Ոսկի մագերով արքայազուհիներ.—
 «Տղան՝ աչքերը որպէս արեգակ,
 «Աղջիկը՝ չքնազ, որպէս հրեշտակ»:

Կոյր բաղդը ժպտաց որբ աղջիկներին:
 Պատահմամբ անցնող արքայի որդին
 Մի առ մի լսեց նրանց փափազը,
 Վերջացած գտաւ իր նպատակը:
 Յետ դարձաւ հօր մօտ, պատմեց ծնողին.
 Պալատ բերեցին որբուկ քոյրերին:
 Տղան կին առաւ ամենից փոքրին,
 Եւ պատէր տուեց նա միւսներին.—

«Թող ազատ ապրեն, պալատում մնան,
 «Մէկը թող գործի մի հսկայ վրան,
 «Իսկ միւսը թող պատրաստի սեղան,
 «Որ լիացնի զօրքին ամենայն»:

Երբ կարիք եղաւ հսկայ վրանի.
 Մեծ քոյրն ասաց.— «Ես բան չեմ անի
 «Ես խոստում արի գործել այդ վրան,
 «Երբ ինձ հաւանէր թագաւորի տղան»:
 Երբ կարիք եղաւ մի ճոխ սեղանի,
 Միջնեկ քոյրն ասաց.— «Ես բան չեմ անի.
 «Ես խոստում արի պատրաստել սեղան,
 «Երբ ինձ հաւանէր թագաւորի տղան»:
 Եւ հերթը հասաւ ամենից փոքրին.—
 Նա ծնեց որդի իր ժամանակին.—
 Մի սիրուն տղայ, մագերը ոսկի,
 Աչքերը նման վառ արեգակի:

Եւ մեծ քոյրերը՝ նախանձից զրգւած,
 Թագցրին մօրից զաւակը ծնած:
 Բարուր արեցին մի սև շան լամուկ,
 Ու դրին ճօճը մօրիցը ծածուկ:
 Նորածին մանկան պինդ փաթաթեցին,
 Տարան անտառի խորքը գցեցին:
 Յետոյ լուր տւին արքայի-որդուն.—

«Թագուհին ծնեց քեզ համար մի շուն:
 Թագաւորն ասաց.— «Ոչինչ թող մնայ,
 Պալատի դռան պահապան դառնայ»:
 Մի տարի չանցած՝ թագուհին պառկեց,
 Եւ այս անգամը մի աղջիկ ծնեց:
 Մի աղջիկ, այնքան չքնազ, նազանի,
 Որ մարդու լեզուով պատմել չի լինի:
 Աչքերը թուիչ չքնաղագեղ,
 Մագերը գանգուր, ոսկի փառահեղ:

Իսկ չար քոյրերը, նախանձից զրգւած,
 Թագցրին մօրից աղջիկը ծնած:
 Բարուր արեցին մի կատուի ձագուկ,
 Դրին ճօճի մէջ մօրիցը ծածուկ,
 Նորածին աղջկան պինդ փաթաթեցին,
 Տարան անտառի խորքը գցեցին:
 Յետոյ արքայի-որդուն լուր տւին,—
 «Քեզ մի կատու ձագ ծնեց թագուհին»:
 Սակայն այս անգամ թագաւորի տղան
 Սաստիկ վրդովւած՝ տւեց հրաման.—
 «Դնել թագուհուն կարէ-կարասում,
 «Կարասը թաղել մեծ-հրապարակում,
 «Որ անցնող, դարձող նայի այդ կնկան,
 «Նայի և թքի խաբեբայի վրան»:

IV

Արքայագուճններն անտառում չկորան:
 Նրանց խնամեց անտառի պախրան.
 Մի գլխոտ մօր պէս ծիծ տւաւ, պահեց,
 Հէնց ոտքի ելան, ետեւ գցեց:
 Եղբայրը դարձաւ որսորդ համարձակ,
 Շինեց անտառում մի սիրուն տնակ.
 Անտառներ ընկած՝ նա որս է անում,
 Բերում էր, սիրուն քրոջը պահում:
 Մի գեղեցիկ օր նախանձ քոյրերը
 Իմացան՝ ողջ են սիրուն որբերը:
 Ահ ու սարսափով մէկ մէկու դիպան.—
 Պէտք էր շտապել, գտնել մի դարման:
 Կարող էր մի օր գաղտնիքը բացւել՝
 Նախանձ քոյրերին կորստեան մատնել:
 Ճարները կտրած երկու չար քոյրեր
 Առան ձեռները մի մի գամբիւղներ,
 Ընկան անտառը՝ սունկ ժողովելու,
 Սիրուն որբերի հետքը գտնելու:

Շատ չար չարւեցին, շատ խորքը մտան.—
 Նրանց ներս քաշեց անտառի արքան,
 Տարաւ, պատեց կուսական ձորեր,
 Ուր դեռ չէր հպած հող-մարդի ոտքեր:
 Ահա ձորի մէջ մի փրփուր վտակ,
 Փրփուր վտակի ափին մի տնակ:
 Քոյրերը մտան տնակի դռնից
 Եւ շւարեցան տեսած պատկերից:
 Լուսամուտի մօտ նստած միայնակ՝
 Ես աղջիկ ասեմ, իսկ դուք՝ հրեշտակ:
 Այնքան գրաւիչ, այնքան նազանի,
 Որ մարդու լեզւով պատմել չի լինի:
 Աչքերը թովիչ ու չքնաղագեղ,
 Մաղբըրը գանգուր, ոսկէ փառահեղ:

«Այ սիրուն աղջիկ ինչո՞ւ ես մենակ,
 «Ուր է եղբայրդ, որսորդ համարձակ,
 «Ամբողջ օրերով նա որս է անում,
 «Քո մասին երբէք նա հոգ չի անում:
 «Նա քեզ չի սիրում, եթէ քեզ սիրէր,
 «Իզուր չէր քաշ գալ անտառ ու ձորեր,
 «Կերթար քեզ համար ընծայ կր բերէր
 «Հուրի-Մալաքի ոսկի-ողկոյգներ:
 «Հուրի-Մալաքին դու չես ճանաչում,
 «Նա էլ քեզ նման չքնաղ ու սիրուն՝
 «Նստած ամրոցում իր կախարդական՝
 «Ապրում է ազատ կեանքով դիւթական:
 «Շատ բաներ ունի նա հրաշալի,
 «Շատ բան իմաստուն, շատ զւարճալի:
 «Ունի հայելի.— աշխարհ բովանդակ
 «Այդ հայելու մէջ ցոլում է արձակ:
 «Ունի խաղողի այգիներ ոսկի,
 «Որ ինչքան քաղես, չի հատնիլ սկի,
 «Ինքն ամեն շնորհ, ամեն ձիւրք ունի,
 «Եւ չի զգում կարիք և ոչ մի բանի:
 «Երկինք ու երկիր, անտառներ ու ծով

«Նրա մի հատիկ մատի ցուցումով
 «Լցնում են կեանքը անուշբերկրանքով,
 «Լցնում են աշխարհ անուշարսափով:
 «Նա հասկանում է ամենի լեզուն.
 «Թէ սողուն լինի, թէ նուկ, թէ թռչուն.
 «Ծոր ու ցամաքի ամեն արարած
 «Նրա հրամանին պատրաստ կան կանգնած,
 «Թող քո եղբայրը, որսորդ աննման,
 «Թող գնա, բերի քեզ համար մի բան
 «Հուրի-Մալաքի չքեղ ամրոցից,
 «Թէկուզ անսպառ ոսկու խաղողից:
 «Այդպէս թող ցոյց տայնա քեզ իր սէրը.
 «Թէ չէ ինչ բան են դատարկ որսերը...»:

V

Որսորդ եղբայրը տուն դարձաւ որսից,
 Տեսաւ քոյրիկը խռով իրանից.

Էլ ոչ խօսում է, ոչ բան պատրաստում,
 Բիթ ու մոռութ կախ տեղից չի շարժում:

— «Ի՞նչ է պատահել, քոյրիկ իմ անգին,
 «Եղբայրդ մատաղ լինի քո կեանքին.

«Ի՞նչ ցաւ էլ ունես, ինչ դարդ, ինչ կարիք,
 «Ասա, մի պահիր ինձանից գաղտնիք»:

— «Բա՛ — այսպէս խօսեց քոյրը խռոված
 «Դու ամբողջ օրը անտառներ ընկած

«Քեզ համար ազատ քէֆեր ես անում,
 «Իսկ իմ օրերս տխուր են անցնում:

«Ինչպէս տեսնում եմ ինձ չես սիրում.
 «Թէ ինձ սիրում ես, ինչո՞ւ չես գնում

«Հուրի-Մալաքի ամրոցը չքեղ,
 «Որքան գեղեցիկ բաներ կան այնտեղ:

«Գնա, բեր դու ինձ ողկոյգներ-ոսկի,
 «Որ ինչքան քաղես, չի հատնում սկի»:

— «Մի լար, իմ քոյրիկ, լսիր իմ խօսքը,
 «Ո՛ւր ուզես կերթամ, թէկուզ դժոխքը:
 «Ես մի քոյր ունիմ աշխարհիս վրան,
 «Պատրաստ եմ զոհել ողջ կեանքս նրան:
 «Թէ ծով թէ ցամաք, թէ ձոր, թէ լեռներ,
 «Կերթամ կշրջեմ ամենայն կողմեր:
 «Երկաթէ տրեխ կհագնեմ ոտքիս,
 «Երկաթէ մահակ կը բռնեմ ձեռքիս,
 «Մինչև չգտնեմ Հուրի-Մալաքին,
 «Զեմ գալ, երևալ իմ քրոջ աչքին»:

Որսորդ պատանին ճանապարհ ընկաւ,
 Եւ գիշեր ցերեկ էլ դադար չառաւ:

Շատ անցաւ լեռներ, խիտ անտառներով.
 Շատ անցաւ ձորեր, փրփուր ջրերով.

Մի օր իր առջև բացւեց մի բացան,
 Մի գեղեցիկ դաշտ, կանաչ անսահման:

Կանաչ դաշտի մէջ ահա մի տնակ,
 Շուրջը ամալի անմարդաբնակ:

Տղան մօտեցաւ սիրուն տնակին,
 Տեսաւ, նստել է դեռահաս մի կին.

Նստել է անհոգ և թել է մանում.—
 Իսկ թելի տուտը ձգում է, տանում

Մի սիրուն աղջիկ, անմեղ խաղերով,
 Կծկում, խճճում սիրուն մատներով:

Իսկ հեռու նստած երրորդ քոյրիկը
 Վերջը խլում և թելի կծիկը,

Առանձին ուշքով էլ ետ յետ կծկում,
 Մահւան մկրատով մէկ մէկ կտրտում:

Սրանք որ տեսան անձանօթ տղին,
 Իրանց ձեռքերի թելերը թողին.—

— «Բարե՛, ասացին հրտեղից եկար,
 «Այս երկրի ճանփէն հրտեղից գտար:

«Օճն իր պորտովը, թռչունն իր թևով
 «Զի համարձակւել անցնել մեր մօտով:

«Ո՛վ ընկաւ այստեղ, էլ պրծում չունի,

«Գեղան-գեղալուսի ուղին է այստեղ,
 «Կորստեան ճանփայ և մահ ամեն տեղ»:
 Տղան բաց արեց իր անմեղ բերան,
 Պարկեանքոյրերին տւեց պատասխան.—
 —«Հուրի-Մալաքի ամրոցն եմ գնում.
 Նրա ամրոցում խաղող է բուսնում.
 Մի հրաշք-խաղող, ողկոյզը ոսկի,
 «Որ ինչքան քաղես, չի հատնում սկի:
 «Ես մի քոյր ունեմ անտառի միջին,
 Մի անմեղ մանուկ, հրեշտակ հոգին,
 Այդ նա է ուղել, ես պիտի ճարեմ,
 «Թէկուզ իմ բոլոր կեանքս թափառեմ:
 Մինչև չգտնեմ Հուրի-Մալաքին,
 «Ձեմ կարող յայտնւել իմ քրոջ աչքին»:
 —Այ, Վիզը կոտրի այն պառաւներին,
 «Որ քո քրոջը խելքահան արին:
 «Նա անմեղ մանուկ, դո՛ւ ազատորսորդ,
 «Փառք ու արկածի քո սիրտը կարօտ,
 «Կերթաս այդ ուղին, էլ յետ չես դառնայ:
 «Հուրի-Մալաքի բիւրեղ-կրիստալ
 «Կախարդ ամրոցում դու քար կը դառնաս
 «Մարմար քար-արձան յաւէտ կմնաս
 «Եւ կկատարւի միտքը չարերին,
 «Որ քեզ լոյս-կեանքից զրկել ուզեցին:
 «Ձեր հայրը դժբաղդ՝ սրտի ցաւերից,
 «Գլուխ վեր առած իր պալատներից,
 «Արան տւել է որս-անտառներին:
 «Ախ, թէ նա գտնէ իր գաւակներին,
 «Իսկոյն կը բացւէր այն հին գաղտնիքը,
 «Որ մեղաւոր չէ ձեր խեղճ մայրիկը»:
 —«Ի՛նչ մայրիկ, ի՛նչ բան,—խօսեց
 Մեր մայրն է եղել անտառի պախրան.
 «Բայց ես գնում եմ, չեմ կարող մնալ,
 Միայն խնդրում եմ, թէ գիտէք ցոյց
 «Թէ ո՞ր կողմովը ես պիտի գնամ,

«Որ իմ մուրազին հասնել կարենամ»:
 —«Լսիր պատանի, մեր խօսքը վերջին,
 «Հազար, հազարներ՝ կարօտ այդ փառքին,
 «Այս ճանապարհով եկան, գնացին
 «Եւ ո՛չ մէկը յետ չդարձաւ կրկին.
 «Եւ դո՛ւ էլ կերթաս, կմնաս այնտեղ,
 «Կդառնաս անշունչ մի անդրի բիւրեղ,
 «Իսկ քո խեղճ քոյրը, անտէր, անխնամ...»
 —«Ես ձեզ ասացի, որ պիտի գնամ.
 Մինչև չգտնեմ Հուրի-Մալաքին,
 «Ձեմ կարող յայտնւել իմ քրոջ աչքին»:
 —«Դէհ, լաւ ահանջ դիր դու մեր խրատին,
 «Թէ որ կամք ունի քո կտրիճ հոգին:
 «Բռնիր այս ուղին և գնա անխօս,
 «Անխօս են ասում, լսո՛ւմ ես՝ անխօս:
 «Եթէ մի հատ խօսք դուրս գայ քո բերնից,
 «Կամ թէ մի հառաչ ելնէ քո կրծքից,
 «Դու էլ չես կարող մուրազիդ հասնել,
 «Դու էլ չես կարող ողկոյցներ ճարել:
 —«Եօթն օր, եօթ գիշեր դու ճամփայ կերթաս
 «Եւ ամեն գիշեր մի տեղ կը մնաս:
 «Առաւօտը վաղ կելնես արևից,
 «Որ քաղես համասփիւռ ծաղիկներից:
 «Եօթ օրում եօթ փունջ ծաղիկ կը կապես,
 «Եօթներորդ օրը կերթաս, կտեսնես
 «Մի շքեղ ամրոց, շուրջը այգիներ,
 «Անթիւ ծաղկանոց, ցուրտ շաղրւաններ:
 «Ամեն մի ծաղիկ, ամեն մի մացառ,
 «Ամեն մի ծառի ամեն ճիւղ դալար,
 «Համայն ամրոցի զարդ ու կարասիք,
 «Մարմար սանդուղքներ, բիւրեղէն անդրիք,
 «Մի լեզու դառած ահեղ ձայն կը տան.—
 «Այդ ո՞վ է գալիս, ո՞վ է այդ տղան.
 «Բայց շփոթւես, ձայն չհանես դու,
 «Երբէք չնայես շուրջդ անարկու.

«Քայլերդ ուղղիր դէպի ամրոցը,
 «Կարծիր՝ չես լսում ահեղ գողոցը:
 «Այլ ու ձախ ցանիր համասփիւռ ծաղիկ,
 «Դիմիր ամրոցը անխօս ու լռիկ:
 «Քանի մօտենաս կախարդ ամրոցին,
 «Այնքան էլ ահեղ ձայներ կը լսին:
 «Եւ դու պիտ ելնես մարմար սանդուղքով,
 «Որ եօթանասուն անգամ եօթ ոտքով
 «Զգուժ է վերև:—Ամեն մի ոտքիդ
 «Արձազանք կտան քո ականջներիդ
 «Քառասուն անգամ քառասուն հազար
 «Արծաթ զանգակներ անդուր, մի դարար:
 «Բայց դու մի ըսպէ քեզ չկորցնես,
 «Անխօս ու լռիկ յառաջ կշարժես,
 «Վերև, միշտ վերև՝ շարունակ կեղնես,
 «Բոլոր սանդուղքը ծաղիկ կցանես.
 «Եւ երբ բարձրացար սանդուղքը վերջին.—
 «Յանկարծ կտիրէ լուսթիւն խորին:
 «Եւ դու կտեսնես անթիւ արձաններ,
 «Որ երբեք էին քաջ պատանիներ,
 «Փառք ու արկածի սրտները անձկոտ,
 «Գնացին, կորան անդարձ, անհաղորդ:
 «Մօտիդ մնացած քո ծաղիկները
 «Շահ տուր դու նրանց, թող թշւառները
 «Մի երկու ըսպէ կեանքի հոտ առնեն,
 «Որ քո մուրազիդ խափան չլինեն:
 «Յետոյ կմտնես մի սրահ չքեղ.
 «Մի չքնաղ էակ կտեսնես այնտեղ.
 «Այնքան հմայիչ, այնքան հուր-սիրուն՝—
 «Պատմել չի կարող հող-մարդու լեզուն:
 «Ցանկութեան մտքով նրան չնայես,
 «Եւ ոչ մի բանի դու ձեռք չխփես:
 «Նա ինքը կգայ, քեզ հարցում կանի,
 «Կառնի քո ձեռքը, իր մօտ կտանի.
 «Կասի.—«Եկել ես, որ իմ ամրոցից

«Տանես ողկոյգներ ոսկի խաղողից,
 «Դու արժանի ես այդ մեծ շնորհին,
 «Երբ այդքան քաջ է քո ազատ ոգին.
 «Ա՛ռ ողկոյգները, տար քո սիրունուն,
 «Որ քեզ շատ սիրի, չանի դատարդիւն»:
 —«Բայց դու չխաբւես նրա խօսքերին,
 «Զասես թէ քոյրդ է միակ սիրելին,
 «Որ դու անմեղ ես, որպէս հրեշտակ.
 «Առ ողկոյգները նրա սեղանից,
 «Եւ իսկոյն փախիր կախարդ սրահից:
 «Թող գողան հազար, հազար զանգակներ,
 «Թէ՛ «Տարան, տարան ոսկի-ողկոյգներ,
 «Տարաւ համարձակ այդ որսորդ տղան
 «Մեր ողկոյգները—բռնեցէք դրան»...
 «Զնիմ, չիմանամ սարսես կամ դողաս,
 «Դու անմեղ կերթաս, անփորձ յետ կգաս:
 «Եւ երբ որ հասնես դաշտը լայն արձակ,
 «Եւ երբ կլռեն աղմուկ, աղաղակ,
 «Նոր իմացիր, որ ազատ վտանգից,
 «Կարող ես խօսել անհուն հրճւանքից:
 «Ահա դու գիտես ամեն հանգամանք.
 «Գնա՛, պատանի որսորդ համարձակ.
 «Երկու զօրեղ բան կան քեզ օգնական.—
 «Մուրբ Անմեղութիւն, Սէր Եղբայրական»:

VI

—«Դէ՛հ մնաք բարեւ, ասաց մեր տղան,
 «Ինչպէս ասացիք, կանեմ ամեն բան»:
 Եօթն օր, եօթ գիշեր նա ճամփայ գնաց,
 Եօթ անխօս գիշեր նա դաշտում մնաց:
 Արևից առաջ միշտ վեր կկենար,
 Համասփիւռ ծաղիկ քաղելու համար:
 Եօթ օրը անցաւ. ժամը լրացաւ,
 Հուրի-Մալաքի ամրոցին հասաւ:

Ամեն մի ծաղիկ, ամեն մի մացառ,
Ամեն մի ծառի ամեն ճիւղ դալար,
Համայն ամրոցի զարդ ու կարասիք,
Մարմար սանդուղքներ, բիւրեղէն անդրիք,
Մի լեզու դառած՝ տւին անեղ ձայն.—

—«Այդ ո՞վ է գալիս, ո՞վ է այդ տղան»:

Լսեց պատանին, անցաւ անխռով,
Համասփիւռ ծաղիկ շուրջը ցանելով.
Գնաց, որ ելնէ մարմար սանդուղքը.
Բայց հէնց որ դրեց առաջին ոտքը՝
Քառասուն անգամ քառասուն հազար
Արծաթ զանգակներ բարձրացրին հաւար:
Տղան չէր լսում, կարծես, ոչ մի ձայն.

Ծաղիկ սփռելով քարերի վրան՝
Ելաւ, բարձրացաւ, հասաւ Մեծ-Սրահ,

Տեսաւ շարած են յատակի վրայ

Անթիւ, անհամար բիւրեղ անդրիներ,

Որ երբեմն էին քաջ պատանիներ.—

Փառք ու արկածի սրտները անձկոտ՝

Եկան ու կորան անդարձ, անհաղորդ:

Ծաղիկներ ցանեց բոլորի վրայ,

Անցաւ համարձակ դէպի Մեծ-Սրահ:

Տեսաւ, նստել է այնտեղ միայնակ.—

Ես աղջիկ ասեմ, իսկ դուք հրեշտակ:

Այնքան հմայիչ, այնքան հուր-սիրուն,

Պատմել չի կարող հող-մարդու լեզուն:

Ձեռքում Հայելի— աշխարհ բովանդակ

Այն հայելու մէջ ցոլում էր արձակ:

Հուրի-Մալաքը երբ տեսաւ տղին,

Իսկոյն ցած դրեց կախարդ Հայելին:

Բարձրացաւ տեղից անհուն նազանքով,

Փարեց պատանուն խանդաղատանքով.—

Ասաց:—«Եկել ես, որ իմ ամրոցից

«Տանես Ողկոյցներ Ոսկի Խաղողից:

«Դու արժանի ես այդ մեծ շնորհին,

«Երբ այդքան քաջ է քո կտրիչ հոգին:
«Առ ողկոյցներս, տար քո սիրունուն,
«Որ քեզ շատ սիրի, չանի դադարկիւն»:
Պատանին խլեց խաղողը ձեռքից,
Շուռ եկաւ փախաւ կախարդ սրահից:

VII

Ամրոցի ոգին տւեց հրաման.—

«Մարմար անդրիներ, բռնեցէք դրան,

«Բռնեցէք խիզախ որսորդ պատանուն,

«Որ ողկոյցներս չտանի իր տուն»:

Մարմար անդրիներ մի լեզու եղան,

Ամրոցի ոգուն տւին պատասխան.—

—«Մենք ինչո՞ւ բռնենք ազատ-որսորդին,

«Կեանքի ծաղիկներ ցանեց մեր գլխին»:

—«Մարմար սանդուղքներ, դո՞ւք բռնէք

—«Ձենք կարող բռնել,—տւին պատասխան,

«Նա մեր վրայից երբ եկաւ, անցաւ,

«Համասփիւռ ծաղիկ մեզի շատ տւաւ»:

—«Դո՞ւք իմ պարտիզի փուշ ու մացառներ,

«Բռնեցէք դրան, մձձէք ոտներ,

«Որ նա չտանի ոսկի ողկոյցներ,

«Որ չթառամին կախարդ պարտէզներ»:

Փուշ ու մացառներ այսպէս ձայն տւին,

—«Ձենք կարող բռնել մենք այդ տղային.

«Նա մեզ բոլորիս ծաղիկներ սփռեց,

«Համասփիւռ ծաղկի բուրմունք ընծայեց»:

VIII

Որսորդ-պատանին հողմերից արագ
Թռաւ, սլացաւ, հասաւ իր տնակ:

Չար մօրքուրները քրոջ մօտ նստած՝

Սուք էին անում, կեղծ սուք պառաւաց:

Նրանք անկասկած համոզուել էին,
թէ գնաց, կորաւ անդարձ պատանին:
Իսկոյն իրեն կեղծ սուգը թողեցին,
թէն սրտերում անկեղծ տխրեցին:

—«Ախ, նանը մեռնի քո սիրունը բոյին,
«Ախ, որքան քաջ է քո ազատ հոգին:
«Անցար, գնացիր, սար ու ձոր ընկար,
«Հուրի-Մալաքի ամրոցը գտար,
«Ինչո՞ւ, բա, միայն խաղող բերեցիր,
«Ինչո՞ւ այն կախարդ Հայելին թողեցիր,
«Այս ողկոյզներն ինչ արժէք ունին,
«Երբ դու չես բերել Կախարդ-Հայելին:
«Ախ, այն հայելին... աշխարհ բովանդակ
«Այդ հայելու մէջ ցոլում է արձակ»...

Չար պառաւները այնքան գովեցին,
Որ խեղճ քրոջ խելքահան արին:
Գոյրը կախ ընկաւ իր եղբօր վզից:--

—Գնա՛, բեր, ասաց, Հայլին Ամրոցից»:

Որսորդ պատանին թողեց իր տնակ
Եւ ճամփայ ընկաւ անվախ, համարձակ:
Շատ անցաւ լեռներ, խիտ անտառներով,
Շատ անցաւ ձորեր փրփուր ջրերով:
Երջանիկ բախտը յաջողեց նրան,
Բերեց Հայելին նա կախարդական,
Բերեց, նւիրեց քրոջը ընծայ,
Բայց քոյրը դարձեալ դժգոհ է նրա:

—«Գնա՛, բեր, ասաց, ինձ համար ողջ-ողջ
«Հուրի-Մալաքին և ամրոցն ամբողջ»:

Եղբայրն ընկաւ քրոջ ոտքերը,
Ասաց,— խնայիր դու քո եղբօրը,
«Ես ի՞նչպէս գնամ նրան բերելու,
«Նա կախարդական ուժ ունի հուժկու:
«Հաղար-հաղարներ նրա ամրոցում
«Այսօրւայ օրս էլ դեռ քար են մնում...»:

Սակայն քոյրիկը չէր լսում նրան,
Խռովեց, փուեց յատակի վրան.
Սիրուն ոտքերով յատակն էր թակում,
Եւ երեխու պէս լալիս, հառաչում.—
—«Գնա՛, բեր, դու ինձ Հուրի-Մալաքին
«Գնա՛ բեր նրա Ամրոցն ու Այգին»:

IX

Որսորդ-պատանի տեսաւ՝ ճար չկայ
Գլուխը առաւ, դուրս ընկաւ ճամփայ:
Շատ անցաւ լեռներ՝ խիտ անտառներով,
Շատ անցաւ ձորեր փրփուր ջրերով,
Գնաց դուրս եկաւ դաշտը լայն-արձակ
Տեսաւ, էլ չկայ իր ծանօթ տնակ.
Գնաց, որ քաղի Համասփիւռ ծաղիկ.—
Է՛լ ծաղիկ չկար և ո՛չ մի հատիկ:
Վայ տալով գլխին նա յառաջ գնաց.
Հասաւ ամրոցին—մնաց շւարած.—
Ո՞ւր են պարտէզներ, ո՞ւր շատրւաններ,
Ո՞ւր նախկին զւարթ ծառ ու ծաղիկներ...
Ամեն ինչ մեռել, ամեն ինչ թօշնել,
Կասես, թէ մահի քամի էր փչել...
Գնաց բարձրացաւ մարմար սանդուխքից,
Ոչ մի ձայն չելաւ հին զանգակներից:
Ամեն բան մեռած ամեն ինչ հանդարտ,
Կարծես թմրել է Ամրոցը Կախարդ:
Տեսաւ՝ աղջիկը՝ ընկած բարձերին՝
Լալիս է, գոհար արցունքն աչերին:
Գոհար արցունքը՝ անձրևի նման՝
Թափւում, ծովանում յատակի վրան:
Պատանին տեսաւ արցունքի մի ծով
Եւ ազնիւ սիրտը լցւեց խոր վշտով:



—Ներքի ինձ, ներքի, Ոգիդ Ամրոցի,
 «Որ քո հանգիստը ես վրդովեցի,
 «Հաւատան, ես այդ արի ահամայ,
 «Եւ յանցանք չունիմ, երկի՛նքը վկայ...
 «Դադարգիւն եղած իմ քրոջ ձեռքից՝
 «Ես ձեռք վերարայ իմ ջիւան ջանից:
 «Այժմ՝ եկել եմ, որ քեզ էլ տանեմ,
 «Քեզ հետ նաև Քո Ամրոցը վսեմ:
 «Կամ ինձ էլ այստեղ պատժիր, քար դարձրու,
 «Կամ եկ ինձ լսիր, գնանք ես ու դու:
 «Անտարի խորքում ես ունիմ տնակ,
 «Տնակի մօտը մի փոքրիկ վտակ.
 «Այնքան գեղեցիկ բանաստեղծական,
 «Ազատ հոգսերից, անտառ կուսական:
 «Այնտեղ ես ունիմ մի քոյր միայնակ,
 «Հոգին դեռ մանուկ, դէմքով՝ հրեշտակ,
 «Մի հրեշտակը թող երկու լինի,
 «Ինձ այդ մեծ փառքին արա՛ արժանի...»

Հուրի-Մալաքը բացեց իր բերան,
 Որսորդ-պատանու տւեց պատասխան.
 «Որ գաս, քար դարնաս Ամրոցի միջին,
 «Որ ծածուկ մնար այն գաղտնիքը.
 «Թէ մեղաւոր թէ ձեր խեղճ մայրիկը...
 «Ինձ համար մի է, այստեղ թէ այնտեղ.
 «Բայց դեռ պիտ մաքրեմ Ամրոցս բիւրեղ:
 «Այս անդրիները՝ անշարժ ու անշունչ,
 «Քեզ պէս սիրահար էին ոգեշունչ,
 «Փառք ու արկածի սրտները անձկոտ,
 «Եկան ու կորան անդարձ, անհաղորդ:
 «Այսօր փրկութեան ժամը թող հնչի,
 «Քարացածներին թող կեանք ներշնչի.—
 «Ելէք սթափւէք դու մահւան քնից,
 «Ելէք հեռացէք Կախարդ-Ամրոցից...»

Այսպէս որ խօսեց Ամրոցի Ոգին,
 Յանկարծ բիւրաւոր ձայներ լսեցին:

Ամրոցը լցւեց շարժուն մարդկանցով
 Ամեն աշխարհի ամեն տարագով:
 Իրար խառնեցին պատանիները,
 Ինչպէս խառնւում են անտէր գառները:
 Վազող վազողի, փախչող փախչողի.—
 Դատարկւեց Ամրոցն այն ահ ու դողի:

X

Հուրի-Մալաքը իր ողջ Ամրոցը
 Բերեց, զետեղեց անտառի ծոցը:
 Թէ գիւղ, թէ քաղաք, թէ փոքր, թէ մեծ,
 Ամենայն կողմից լուրը տարածւեց:
 Լուրը եկաւ, հասաւ արքայ-որդուն,
 Թէ մի ամրոց կայ անտարի խորքում.
 Մի ամրոց չքեղ, ճոխ, կախարդական,
 Փառաւոր տաճար գեղարւեստական.
 Ողջ շրջակայքը՝ այգի ու պարտէզ,
 Անթիւ շարւած ծաղկանոց պէս-պէս.
 Ողջ այգիների խաղողը՝ ոսկի,
 Եւ ինչքան քաղես, չի հատնում սկի...
 Երկու աննման սիրուն աղջիկներ
 Մալրում են այնտեղ արքայավայել.
 Իրանց հետ ունին մի հատիկ եղբայր,
 Մի քանի պատանի, մի սրսորդ ճարտար:

XI

Արքայի որդին տւեց հրաման,
 Փչել փողերը հին որսորդական:
 Զօրքը հնչեցրեց փողերը հուժկու,
 Գոռ պատերազմի փողերն ահարկու...
 Թէ գիւղ, թէ քաղաք, թէ փոքր, թէ մեծ

Փողերի ձայնը գնաց, տարածւեց:
 Ամեն կողմերից որսորդ պատանիք,
 Ամեն կողմից ռազմիկ մարդիկ
 եկան, միացան Արքայի-որդուն,
 եկան, որ կազմեն զինակակցութիւն:
 Հրաման տրւեց զօրավարներին
 Հաւաքել բոլոր հին զինւորներին
 Ո՛վ ունէր նժոյգ ձի, նեւ ու աղեղ,
 եկաւ, միացաւ բռնակին ահեղ:
 Ո՛վ ունէր նիզակ և կամ որսի շուն,
 Ո՛վ ունէր բազէ, որսական թռչուն,
 Ո՛չ ոք չը մնաց իր տուն ու տեղին,
 Ո՛չ ոք չը մնաց իր կնոջ մօտին:
 Ամենայն կողմից եկան, ժողովեցին.—
 Կազմեցին հզօր բանակ ահագին:
 Մի բանակ ազատ, քաջ որսորդների,
 Մի բանակ ռազմիկ քաջ զինւորների:
 Արքայի որդին անձամբ պատեց,
 Նայեց բոլորին, շարքերը կազմեց,
 Երբ տեսաւ պատրաստ, կազմ է ամեն բան.—
 Յառաջ շարժելու տւեց հրաման:

XII

Թնդաց անտառը փողերի ձայնից.
 Ծառերն արձագանք տւին խորերից:
 Վախկոտ էրէներ՝ հարայ հրոցից
 Խրտնած՝ փախան իրանց որջերից:
 Եւ արքայական որսը ամեն տեղ
 Մեծ յաջողութեամբ, կարգով փառահեղ,
 Գնում էր, մտնում անտառի խորքեր,
 Ուր դեռ չէր հպած մարդկային ոտքեր:
 Անտառի խորքում ահա մի բացան.
 Կանաչ բացանում մի ամուրց տեսան:

Արքայի—որդին յիշեց ամեն բան.
 Բոլոր բանակին տւեց հրաման.
 —«Ո՛չ ոք ձեզանից չը համարձակւի
 Դէպի ամրոցը մի նեւ արձակի.
 Կախարդ—ամրոց է, սրա վրայով
 Ձի կարող թռչել թռչունն իր թևով»

XIII

Հուրի-Մալաքը, ամրոցի Ոգին,
 Տեսաւ, հասել էր ժամը թանկագին,
 Կանչեց որբերին, պատմեց ամեն բան,
 Յայտնեց, որ նրանց հայրն է այդ արքան:
 Պատմեց նրանց մօր դառը ցաւերը,
 Նախանձ քոյրերի նիւթած դաւերը:
 Թէ քոյր, թէ եղբայր լսեցին անձայն,
 Ձէին իմանում՝ խնդան թէ սգան:
 Հուրի-Մալաքը նրանց սիրտ տւեց,
 Որսորդ-պատանուն այսպէս պատւիրեց.—
 —«Դու վեր կաց, գնա՛ նրանց ընդ առաջ,
 Համեստութիւն է այդ բանը պաշտաճ:
 Կերթաս, խոր գլուխ կը տաս արքային,
 Կասես, թող շնորհ անի ծառային,
 Իր զօրք-բանակով, իր իշխաններով
 Հիւր լինի մեզ մօտ միայն մի օրով:
 Իսկ ես կաշխատեմ, որ նրանց ցոյց տանք
 Արքայավայել պատիւ ու լարգանք»:
 Որսորդ պատանին ազատ համարձակ
 Գնաց հօր առջև, գնաց հօր բանակ:
 Խոր գլուխ տւեց իր հայր արքային.—
 —«Հայր, շնորհ արէք ձեր խեղճ ծառային:
 Սովորութիւնը հին, աշխարհային
 Սրբազան պարտք է գնում մեր վզին՝
 Դուրս գալ ձեր առջև՝ խոնարհ խնդրելու՝

Շնորհ անէիք մեզ հիւր լինելու»:
Արքայի սրտին դուր եկաւ տղան,
նա բարեհաճեց մի օրով միայն
իջնել նրանց մօտ, որպէս Աստծու հիւր,
Շրջել ամրոցը, պարտէզ ու աղբիւր:

XIV

Հուրի-Մալաքը տւեց հրաման.—
Ազատ անտառում բացւեց մի սեղան:
Առատ համադամ կերակուրներով,
Յանկոյս ծովային թունդ գինիներով
Բոլոր բանակը նա հարբեցրեց,
Խելքներն առող ու գժւացրեց:
Հարբած ամբոխը եօթն օր, եօթ գիշեր,
Անուշ քէֆերից չբացեց աչեր,
Գիւղեր, քաղաքներ բազմած սեղանին
Եօթն օր, եօթ գիշեր կերան, խմեցին,
Կախարդ սեղան մնաց լիփ-լեցուն.—
Ապշած ամբոխի զարմացքն էր անհուն...
Իսկ թագաւորը և իր իշխաններ
Ամրոցումն էին սեղանի բազմել:
Սակայն ինչ սեղան, ինչ փարթամութիւն,
Ինչ ոսկի, արծաթ, ինչ հարստութիւն...
Ինչ աման բերին—զուտ ոսկի ձուլած,
Ինչ դանակ, գդալ—արծաթ անկասկած:
Բաց մնաց բոլոր հիւրերի բերան.—
—Որքան հարուստ է, ասին այս տղան:
Իսկ երբ հերթն հասաւ կերակուրներին,
Պէտք էր ձեզ նայել նրանց դէմքերին:
Տօլմի խնձորը՝ ոսկի թանկագին,
Լալ ու մարգարիտ խնձորի միջին:
Փլաւի բրինձը՝ մանրիկ ու շմղակ
Թանկագին բիւրեղ հուլունքներ սիպտակ:

Լաւաշ հացերը՝ ոսկու թերթիկներ,
Պանիր-կարագը՝ արծաթի շերտեր...
Մի խօսքով ոչինչ չկար ուտելու,
Կասես մի խաղ էր նրանց ծաղրելու:
Արքան չկարաց զարմանքը պահել,
Հանելուկը ուզեց նա պարզաբանել:
Իրեն մօտ կանչեց որսորդ-պատանուն,
Եւ այս խոսքերը ուղղեց իր որդուն.—
—«Ասենք, տեսնում եմ, որ շատ էք հարուստ,
«Որ շատ փառաւոր ունէք կեանք, ապրուստ,
«Միայն ինձ ասէք մարդ ի՞նչպէս ուտի
«Ոսկի տօլմաներ, փլաւ մարգարիտի»:
Այստեղ պատանին բացեց իր բերան,
Անբաղտ ծնողին տւեց պատասխան.—
—«Եթէ որ մարդս չի կարող ուտի
«Ոսկի տօլմաներ, փլաւ մարգարիտի,
«Հապա ի՞նչպէս էր որ հաւատացիք,
«Երբ ձեզ ասացին, թէ մէր խեղճ մայրիկ
«Ծնեց ձեզ համար մի կատու, մի շուն,
«Մինչդեռ մենք էինք նրա փափկասուն
«Խեղճ զաւակները, մի քոյր մի եղբայր,
«Որ այս անտառում չկորանք իսպառ:
«Այսօր թող բացւի այն հին գաղտնիքը,
«Որ մեղաւոր չէ մեր խեղճ մայրիկը,
«Որ այսքան տարի կապրէ-կարասում
«Խայտարակում է մի անմեղութիւն»:

XV

Եւ այնուհետեւ բանը բացւեցաւ:
Անբախտ թագաւորը նոր կեանք ըստացաւ:
Ազատել տւեց անմեղ թագուհուն,
Մահաւն սև վճիր՝ նազանձ քոյրերուն:
Հին հէքիաթները այսպէս են պատմում.—

Երբ մէկին մահւան՝ են դադապարտում:
Կապում էին նրան չար ձիու պոչից,
Կատաղած ձիուն թողնում ախոռից,
Եւ ձին խրանած՝ առնում էր, թռչում,
Դատապարտեալին սար ու ձոր խփում,
Ամբողջ մարմինը ջարդում, յօշոտում:
Ու մեծ կտորը՝ ականջը թողնում:
Այսպէս պատժեցին նախանձ քոյրերը:
Թագաւորն օրաւ իր զաւակները,
Առաւ աննման Հուրի-Մալաքին
Եւ նշան դրեց իր քաջ զաւակին:
Սկսեց նոր քէֆ, նոր ուրախութիւն,
Մի չտեսնւած հրաշք կեր ու խում:
Տեղ, ոսկի տեղաց նրանց հարսանքին,
Մարգարիտ անձրև տեղաց գլխներին:
Պատանին հասաւ սրտի մուրազին,
Թող դուք էլ հասնեք ձեր մուրազներին:



18406

Հրատարակութիւններ

Երեւանի օկտակար զիտելիքներ տարածող ընկ.

№ 1.

Եղեգնուհի—հեքիաթ—Ա. Տ.-Խաչատրեանի. — գինը 10 կ.

№ 2.

Հուրի-Մալաք—հեքիաթ—հոյն հեղինակի. — գինը 10 կ.

Գինն ի 10 կոփ.

2013

